Շնորհալի դպրոցի "Մեր շնորհալիները" միջոցառումը՝ նվիրված սուրբ Ներսես Շնորհալու մահվան 850 ամյակին։

Նոյեմբերի 12-ին Շնորհալի դպրոցը աշակերտների, ուսուցիչների, ծնողների և համայնքի անդամների համար կազմակերպել էր «Մեր շնորհալիները» խորագրով միջոցառում, որը նվիրված էր Սբ. Ներսես Շնորհալու մահվան 850 ամյակին և նպատակ ուներ հանդիսատեսին և մասնակիցներին ծանոթացնելու մեր բազմաշնորհ հայրապետի թողած բազմաբնույթ, համամարդկային և համաքրիստոնեական գաղափարներին, միջնադարյան գրականության և մշակույթի մեջ նրա մատենագրական ժառանգության բացառիկ դերի մասին։ Բացի այդ, հանդիսատեսը հնարավորություն ունեցավ ճանաչելու մեր դպրոցի սաներին, մեծարելու նրանց և հպարտանալու նրանց անձնական հաջողություններով։

Եկեղեցու հոգևոր հովիվ Հովսեփ տեր Կարապետյանը միջոցառումը բացեց հայ ազգի անվտանգությանը, ապահովությանն և խաղաղությանը նվիրված աղոթքով, իսկ դպրոցի աշակերտները հանդիսատեսի հետ միասին կատարեցին Հայաստանի հանրապետության հիմնը, որից հետո դպրոցի ուսուցիչներ Ջուլետտա Մովսեսյանն ու Անահիտ Սարգսյանը մեր բարձր դասարանների աշակերտների և ուսուցիչների օգնությամբ հանդիսատեսին ներկայացրեցին Ներսես Շնորհալու կյանքի կարևոր դրվագներն և նրա աշխատանքային բազմաշերտ ժառանգությունը։

Աշակերտների շնորհները ներկայացվեցին երեք տարբեր ձևաչափերով։ Երեխաների ձեռքի աշխատանքները ցուցադրված էին սեղանների վրա և տեսահոլովակների օգնությամբ ներկայացվում էին սպորտային բազմաթիվ հնարքներ։ Իսկ բեմում մեր բազմաշնորհ աշակերտները ասմունքում էին, երգում, պարում և երաժշտական գործիքների տարբեր կատարումներ ներկայացնում։ Տաղանդների շարքում առանձնահատուկ մեծարման արժանացավ նաև դպրոցի 7-րդ հարթակի աշակերտուհի Անի Նշանյանը, ով ձևավորել էր դպրոցի ինտերնետային կայքը և ակտիվորեն աջակցում է դպրոցին՝ տեխնիկական հարցերում։

Միջոցառմանը առանձնահատուկ շունչ էր հաղորդել ուսուցիչների և ծնողների օգնությամբ ձևավորված ավանդական ուտեստներով լի տոնական սեղանը։

Միջոցառումը հնարավորություն ընձեռեց մասնակիցներին իրենց դպրոցի և հայկական արմատների ու ինքնության վերաբերյալ սերն ու հետաքրքրությունը զարգացնելու համար։